

Ֆիզիկական անձ հաճախորդների անհատական պահատուփի տեղեկատվական ամփոփագիր

Ուժի մեջ է՝ 29.12.2020թ-ից
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել:
Մանրամասների համար
Հեռ.՝ (374 10) 56 11 11
Էլ. հասցե՝ office@ameriabank.am
www.ameriabank.am

Բանկը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից

Բանկը Հաճախորդին տրամադրում է անհատական պահատուփ /այսուհետ նաև՝ պահատուփ/ Հաճախորդի կողմից համապատասխան հայտ-պայմանագրի կնքման դեպքում և դրան հաջորդող 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում (եթե տվյալ մասնաճյուղում առկա է հաճախորդի կողմից նախընտրելի չափի ազատ պահատուփ): Անհատական պահատուփի վարձակալության ծառայությունից օգտվելու համար Հաճախորդը պետք է ունենա առնվազն ՀՀ դրամով գործող ընթացիկ հաշիվ Բանկում:

1. Պահատուփի Հայտ-պայմանագիր կնքելիս հաճախորդը Բանկ է ներկայացնում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում հաշիվ բացելու, ավանդի, վճարային քարտի և պահատուփի համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները¹: Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով և այլ տարաբնույթ հանգամանքներից ելնելով կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում տալ լրացուցիչ հարցեր: Հաճախորդի պատշաճ նույնականացման անհնարինության կամ հաշիվների սպասարկման անհնարինության դեպքում բանկի կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը կարող է սահմանափակվել: Ինչպես նաև, Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն:
2. Բանկի կողմից պահատվության ծառայությունը մատուցվում է 18 տարեկանը լրացած ֆիզիկական անձանց:
3. Մեկ Պահատուփի Հայտ-պայմանագիրը կարող են ստորագրել մեկից ավել Հաճախորդներ: Նման դեպքերում Հաճախորդների համատեղ համաձայնությամբ ստորև նշված տարբերակներից Հայտ-պայմանագրով սահմանվում է Պահատուփի տնօրինման կարգը, որը համարվում է Հաճախորդ/ներ/ի կողմից Բանկին տրված հանձնարարական.
 - 3.1. Պահատուփը տնօրինում են Հայտ-պայմանագիրը ստորագրած Հաճախորդներից յուրաքանչյուրը առանձին-առանձին և առանց որևէ սահմանափակման, և այս դեպքում Հաճախորդներից յուրաքանչյուրն իրավունք ունի կատարել Պահատուփի հետ կապված ցանկացած գործողություն, ներառյալ՝ կատարել Հայտ-պայմանագրով ընտրված պայմանների փոփոխություններ և դադարեցնել պահատվության ծառայության մատուցումը,
 - 3.2. Պահատուփը տնօրինում են Հայտ-պայմանագիրը ստորագրած բոլոր Հաճախորդները միասին՝ ընդհանուր համաձայնությամբ, և այս դեպքում Հաճախորդներից յուրաքանչյուրի համաձայնությունը

¹ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում հաշիվ բացելու, ավանդի, վճարային քարտի և պահատուփի համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները՝ https://ameriabank.am/userfiles/file/Account_openning_required_documents_2.pdf

պարտադիր է Պահատուփի հետ կապված ցանկացած գործողություն կատարելու համար, ներառյալ՝ Հայտ-պայմանագրով ընտրված պայմանների հետագա փոփոխություններ կատարելու և պահատվության ծառայությունը դադարեցնելու համար:

4. Պահատուփից օգտվելու համար Բանկը Հաճախորդին տրամադրում է Պահատուփի բանալի: Պահատուփը փակվում է 2 բանալիով, որոնցից մեկը Բանկը տրամադրում է Հաճախորդ/ներ/ին, իսկ մյուսը պահվում է Բանկում: Պահատուփը հնարավոր է բացել 2 բանալիների միաժամանակ կիրառմամբ:
5. Պահատուփից օգտվելու/բացելու և Պահատուփի պարունակությունը տնօրինելու իրավունք ունեն Հաճախորդը և (կամ) վերջին(ներ)իս լիազորված անձը(անձինք)/ ներկայացուցիչ(ներ)ը՝ Բանկի կողմից սահմանված գործառնական օրվա ընթացքում: Հաճախորդը պարտավոր է Պահատուփից օգտվելու համար լիազորված անձին (անձանց)/ ներկայացուցիչ(ներ)ին տեղեկացնել «Ամերիաբանկ» ՓԲԸ անհատական պահատուփի պայմանների մասին²:
6. Հաճախորդը կարող է պահասենյակ մուտք գործել միայն Բանկի պատասխանատու աշխատակցի ուղեկցությամբ՝ ներկայացնելով Պահատուփի բանալին:
7. Հաճախորդը, ինչպես նաև վերջին(ներ)իս լիազորված անձը(անձինք)/ ներկայացուցիչ(ներ)ը իրավունք չունեն Պահատուփից օգտվել որևէ երրորդ անձի ուղեկցությամբ:
8. **Անհատական պահատուփերի ծառայությունից կարելի է օգտվել Բանկի հետևյալ մասնաճյուղերում՝**

Մասնաճյուղ	Հասցե	Հեռախոս	Գործառնական օրեր
«Սայաթ-Նովա» մասնաճյուղ	ՀՀ, ք.Երևան, 001, Սայաթ-Նովա պողոտա 8 շենք, 47 տարածք	+374 10 561111	Երկ.-ուրբ.՝ 09:30-17:00, շաբ.՝ 10:00-15:30
«Կոմիտաս» մասնաճյուղ	ՀՀ, ք. Երևան, 0033, Կոմիտաս 12, շ.102		Երկ.-ուրբ.՝ 09:30-17:00, շաբ.՝ 10:00-15:30
«Կամար» մասնաճյուղ	ՀՀ, ք.Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 2		Երկ.-ուրբ.՝ 09:30-17:00,
«Էջմիածին» մասնաճյուղ	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մաշտոց 69/51		

9. Պահատուփի չափերը և սակագները, պահատվության ծառայության ժամկետները, որոնք կարող է ընտրել Հաճախորդը, սահմանվում են ստորև աղյուսակում.

Անհատական պահատուփի տեսակները			Սակագներ /ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ/			
	Կոմիտաս	Կամար, Սայաթ-Նովա, Էջմիածին	1 ամիս	3 ամիս	6 ամիս	1 տարի
Փոքր	250մմ*350մմ*90մմ	300մմ*100մմ*460մմ	15,000	20,000	30,000	35,000
Միջին	250մմ*350մմ*190մմ	300մմ*200մմ*460մմ	20,000	30,000	40,000	60,000
Մեծ	250մմ*350մմ*290մմ	600մմ*200մմ*460մմ	25,000	40,000	50,000	80,000
Շատ մեծ	-	600մմ*900մմ*460մմ	50,000	80,000	100,000	160,000

10. Պահատուփի Հայտ-պայմանագրում նշված ծառայության ժամկետի ավարտից հետո այն երկարաձգվում է Հայտ-պայմանագրում նշված ժամկետով՝ Բանկում այդ պահին գործող Սակագների և Պայմանների համաձայն: Ժամկետը

²«Ամերիաբանկ» ՓԲԸ անհատական պահատուփի պայմաններ՝ <https://ameriabank.am/userfiles/file/Deposit%20Box%20Terms.pdf>

ենթակա է ինքնաբերաբար երկարաձգման յուրաքանչյուր անգամ ժամկետը լրանալուց հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը մինչև ժամկետի լրանալու օրը (իսկ եթե ժամկետը լրանում է ոչ աշխատանքային օր, ապա՝ դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը) ներառյալ գրավոր տեղեկացրել է Բանկին Պահատուփից հրաժարվելու մասին:

11. Պահատվության ծառայության միջնորդավճարի առաջին վճարումը Հաճախորդը կատարում է Հայտ-պայմանագրի ստորագրման ժամանակ, իսկ հաջորդ վճարումները՝ յուրաքանչյուր երկարաձգման ժամանակահատվածի սկզբում՝ կանխավճարային կարգով:
12. Բանկն իրավունք ունի Մակագների համաձայն՝ պահատվության ծառայության համար նախատեսված միջնորդավճարները, ներառյալ տուժանքը, առանց Հաճախորդի հանձնարարականի գանձել Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներից:
13. Պահատուփի բանալու կորստի կամ վնասվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է ողջամիտ ժամկետում այդ մասին տեղեկացնել Բանկին:
14. Բանկը Պահատուփի բանալու կորստի կամ վնասվելու դեպքում տրամադրում է Հաճախորդին նոր Պահատուփ, որտեղ Հաճախորդը պետք է տեղափոխի Պահատուփի պարունակությունը (առկայության դեպքում) կամ կողպեքի փոխարինումը կատարվում է պահատուփի ներկայությամբ՝ նախապես այցելության օրվա և ժամի պայմանավորվածության համաձայն: Այն դեպքում, եթե Հաճախորդը հավաստում է, որ Պահատուփը դատարկ է, ապա դրա բացումը Բանկն իրականացնում է առանց Հաճախորդի ներկայության, իսկ այն դեպքում, եթե Պահատուփն ունի որևէ պարունակություն, ապա Բանկն այն Հաճախորդի ներկայությամբ գույքագրում, պահպանում և հանձնում է Հաճախորդին՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի: Ընդ որում, Պահատուփի բանալու կորստի կամ վնասվելու դեպքում դրա կողպեքի փոփոխության և նոր բանալու տրամադրման համար Պահատուփն պարտավոր է Պահատուփին վճարել 25,000 ՀՀ դրամ (այդ թվում՝ ԱԱՀ):
15. Հաճախորդը կարող է օգտագործել Պահատուփը այնպիսի գույք պահելու համար, որը սեփականության իրավունքով օրինական հիմքերով պատկանում է Հաճախորդին, ազատ է երրորդ անձանց իրավունքներից, որևէ սահմանափակումից կամ կալանքից: Սույն կետում նշված պահանջից բացառություն է կազմում այն դեպքը, երբ Հաճախորդը ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված գրավատու և/կամ վարկային կազմակերպություն է, և այս դեպքում վերջինս կարող է Պահատուփում պահել միայն այնպիսի գույք, որն իր տիտղոսային տիրապետման ներքո է անցել և գտնվում օրինական հիմքերով:
16. Հաճախորդն իրավունք չունի օգտագործել Պահատուփը թմրանյութ, զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր կամ սարքեր, ռադիոակտիվ նյութեր, թունաքիմիկատներ, սննդամթերք, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի և այլ հանցավոր գործունեության հետ կապված, ինչպես նաև այլ՝ օրենքով արգելված տեսակի գույք պահելու համար:
17. Բանկն ապահովում է Պահատուփի պահպանումը հատուկ պայմաններով և անվտանգության միջոցներով հագեցված չհրկիզվող սենյակում:
18. Բանկն ապահովում է Պահատուփի պարունակության ամբողջականությունը, անվտանգությունը և իրեն հասու տեղեկատվության գաղտնիությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:
19. Պահատուփից օգտվելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.
 - 19.1. ՀՀ օրենսդրության համաձայն Պահատուփի պարունակության առգրավման/բռնագրավման դեպքում,
 - 19.2. Պահատուփի պարունակության նկատմամբ ՀՀ օրենսդրության համաձայն սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու) դեպքում,
 - 19.3. Կողմերի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
20. Բանկն իրավունք ունի ստորև նշված հանգամանքներից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում, անկախ Հաճախորդի համաձայնությունից և ներկայությունից, բացել Հաճախորդի Պահատուփը.
 - 20.1. ՀՀ օրենսդրության համաձայն՝ դատարանի վճիռ/որոշման, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կամ պետական իրավասու այլ մարմնի որոշման հիման վրա,

- 20.2. Եթե կան լուրջ և հիմնավոր նախադրյալներ ենթադրելու, որ վտանգված է Բանկի անվտանգությունը և (կամ) գործունեությունը, և (կամ) Պահատուփում գտնվում է Պայմանների կամ օրենքի համաձայն արգելված տեսակի գույք,
- 20.3. Եթե Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները դադարեցվելուց հետո 3 ամիս և ավել Հաճախորդը չի ազատել Պահատուփը և բանալին չի վերադարձրել Բանկ,
- 20.4. Հաճախորդի կողմից Սակագների համաձայն՝ պահատվության ծառայության համար նախատեսված միջնորդավճարների վճարման պարտավորությունները 3 ամիս և ավել չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,
- 20.5. Կողմերի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Սույն կետի 1-ին ենթակետում նշված դեպքերից բացի բոլոր մնացած դեպքերում Բանկն առանց Հաճախորդի ներկայության Պահատուփի բացման դեպքերում առկա պարունակությունը գույքագրում և պահպանում է համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի, ընդ որում՝ եթե Պահատուփի պարունակությունը վկայում է Պայմանների կամ ՀՀ օրենսդրությամբ արգելված որևէ գույքի առկայության մասին, ապա Բանկը հետագա գործընթացն իրականացնում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

21. Բանկն իրավունք ունի միակողմանի դադարեցնել Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները.
 - 21.1. ՀՀ օրենսդրության համաձայն Պահատուփի պարունակության առգրավման/բռնագրավման դեպքում,
 - 21.2. Եթե բացահայտվում է, որ Պահատուփում գտնվում է Պայմանների կամ օրենքի համաձայն արգելված տեսակի գույք,
 - 21.3. Պայմանների համաձայն՝ Հաճախորդի պարտավորությունները վերջինիս կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ 10 օր առաջ այդ մասին ծանուցելով Հաճախորդին,
 - 21.4. Բանկի նախաձեռնությամբ այլ դեպքերում՝ 10 օր առաջ այդ մասին ծանուցելով Հաճախորդին:
22. Բանկի միակողմանի նախաձեռնությամբ և Պայմանների համաձայն Կողմերի միջև իրավահարաբերությունները ժամկետից շուտ դադարեցնելու դեպքում Բանկը վերահաշվարկում է պահատվության ծառայության համար Հաճախորդի կողմից վճարված միջնորդավճարը և չօտագործված օրերի համամասնությամբ հաշվարկված միջնորդավճարի մնացորդը վերադարձնում է Հաճախորդին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դադարեցման հիմքը Հաճախորդի կողմից իր պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն է:
23. Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունների դադարեցման նպատակով Հաճախորդը պարտավոր է ազատել Պահատուփը առկա պարունակությունից և Պահատուփի բանալին վերադարձնել Բանկ:
24. Անհատական պահատուփերի հայտ-պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով: Հայտարարություն՝ ֆիզիկական անձը հնարավորություն ունի ներկայացնելու ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև կնքվող գործարքից բխող պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին: «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ կնքել է համաձայնագիր, որը տարածվում է միայն այն պահանջների վրա, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

Ամերիաբանկ ՓԲԸ Անհատական պահատուփերի վարձակալության ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝

- «Ամերիաբանկ» ՓԲԸ անհատական պահատուփի պայմաններ՝
<https://ameriabank.am/userfiles/file/Deposit%20Box%20Terms.pdf>
- Ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ՝
<https://ameriabank.am/userfiles/file/Terms and Conditions PP arm 29 09 2017.pdf>

- «Ամերիաբանկ» ՓԲԸ ստանդարտ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար՝
https://ameriabank.am/userfiles/file/Individual_Standard_Tariffs.pdf